ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵՂԱՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 4

ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1886

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԾՆՈՐՀԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՋԱՏԻԿ

Հա՛ Զատիկ
Բերաւ բարիք,
Ջամով խորված,
Անոյշ հացիկ,
Ընորհաւոր ձեզ, ով
որդիք։

Ջաւանոցում՝
Ջաւք 'ի ցնծում,
Ընծայ բերին
Մանուկներին
Ընորհաւոր հաւկիթ կլորիկ։

Ծրնողք առան
Հաւի ընծան,
Կարմրացրին
Ու տօնեցին
Շնորհաւոր սուրբը Զատիկ։

Կարմիրն ազնիւ
Զատկին առթիւ
Համեստ գոյն է
Սուրբ արիւնիւ,
Որ մեզ շնորհս ցօղէ հեզիկ։

Դուք էլ, որդիք,
Թէ հեզ լինիք,
Ուսեալ, համեստ,
Առաքինիք,
Վարդի գոյնով պէտք է կարմրիք։

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

ԳԱՐՆԱՆ ՄԵԾ ՏՈՆԵՐԸ

(Յիշողութիւններ վաղուց անցած գնացածից)։



աղկազարդը մի շատ ուրախ կիրակի է, մանաւանդ երեխաների համար։ Նորանով է սկսվում զարնանային մեծ տոների մի շարքը. նա է բերում փոքրիկներիս համար շատ թանկագին զուարճութիւններ։

Դեռ շաբաթ երեկոյեան ես անհամբեր սպասում էի հօրս տուն գալուն։ Նա պիտի բերէր ինձ համար նոր կօշիկներ՝ վաղ առաւօտեան եկեղեցի գնալու համար ու բացի դրանից և մի բան, որը ամենից շատ էր հետաքրքրում ինձ։ Ամբողջ օրը ես նախանձելով տեսել էի թէ ինչպէս իմ ընկերներն ուրախ ուրախ վազվզելով ճռճռացնում էին փոքրիկ ճռռանները։ Կարծես նրանք խօսք էին տուել, որ այդ օրը ինձ լաւ տանջեն։ Հէնց որ մօտենում էի մէկին, խնդրելով ցոյց տալ ճռռանը, որպէսզի գոնէ տեսնեմ նրա բարակ լեզուակը, ատամնաւոր

թոփը, նա քթիս առաջ պտույտ էր տալիս այդ աղմկաշատ գործիքը և իսկոյն յետ փախչում, հեռու կանգնում ու ուշադրութիւնով սկսում էր գննել ճռռանի բոլոր մասերը։ Ես մնում էի գլխիկոր կանգնած, քիչ էր մնում որ լաց լինէի։ Պտնում էի տուն, բայց չէի կարողանում մի ժամ հանգարտ նստել. հէնց որ ականջիս էր հասնում խմբովին ճռռոցը, մոռանում էի ամեն ինչ։ Դուրս էի վազում և էլի նոյն կերպով հեռուից մտիկ էի տալիս ընկերներիս։

Մի կերպ այդ օրը մթնացրի։ Հօրս գալու ժամանակն էր. նրան սպասում էի մեր տան դռների մօտ։ Վերջապէս լսեցի նրա քայլերը, վազեցի գնացի առաջը և սկսեցի հետաքրքրութիւնով տնտղել թէ ինչ ունի ձեռքին։ Բայց նա ոչինչ չէր ասում, նայում էր ինձ և ժպտում։ Որքա՜ն սառնասիրտ էր հայրս. մի՞թէ չգիտէր թէ ինչպէս էի օրը մթնացրել։ Նա էլ կարծես ուզում է ինձ պատժել։ Հարցնում եմ թէ բերի՞լ ես ճռռանս. հարցնում եմ երկու անգամ, երեք անգամ, բայց նա շարունակ ժպտում է։ Պնդասի՞րտ հայրիկ։ Նա մտնում է տուն, նստում է օթեակի վրայ. ոչինչ, ոչինչ չի բերել... կատարեալ յուսահատութիւն։ Ես կանգնած եմ մի անկիւնում և յօնքերս կիտած՝ աչքիս տակով շարունակ նայում եմ նրան. սիրտս եռ է գալիս. ես վճռել եմ երկար լաց լինել, եթէ նրա բերանից «չէ» դուրս գայ։ Տէ՞ր Աստուած, երբ պիտի խօսէ...

Պայլս, որ ամբողջ օրը յուսադրել էր ինձ, հասկանում էր ցաւս. նա յայտնեց հօրս որ այլևս ինձ չնեղացնէ. եթէ մի բան բերել է, դուրս հանէ։

—Թող սովորի համբերող լինել, ասաց նա վերջապէս և ձեռքը տարաւ դէպի գրպանը։ Սիրելի՞ հայրիկ։ Նա դուրս բերեց ճռռանը և ծիծաղելով մեկնեց դէպի ինձ։ Մի ակնթարթում դուրս թռայ մթին անկիւնից, խլեցի սիրածս առարկան։

Ֆաղկազարդի շաբաթ օրը կարծես նոր լուսացաւ ինձ համար։ Ձեռս առայ կոթը և որքան ոյժումս կար, սկսեցի պտրտել։ Ձայնը լաւ էր, շատ լաւ. ախ, եթէ այդ բոպէին դուրս գայիս ընկերներս... Բայց հայրս հրամայեց լռել. նոյնը կրկնեց և մայրս, աւելացնելով թէ բունի մէջ հանգչող հաւերը լսում են ձայնը և այլևս ձու չեն ածիլ։ Ես կատարեցի նրանց հրամանը. սկսեցի լուռ տնտղել ճռռանիս ամեն կողմերը. շատ ճարտարարուեստ շինուածքն չէր, բայց որքան բարձր ձայն էր հանում։ Այնքան գերել էր ինձ այդ խաղալիկը, որ մինչև անգամ չէի նկատել, թէ ինչ էր անում հայրս. իսկ նա վաղուց հանել էր ոչ միայն նոր կօշիկներս, այլև իմ նոր արխալուղացուն, որ մի խայտաբղետ չիթ էր։ Երբ տեսայ և այդ իրերը, էլ ոչինչ ցանկութիւն չմնաց իմ մէջ, բայց միայն թռչել այդ բոպէին ընկերներիս մօտ, ցոյց տալ և տեսնել նրանց դէմքերը։

Վերջապէս մենք քնեցինք. պէտք էր առաւօտը շուտ վեր կենալ եկեղեցի գնալու համար։ Բայց ինչպէս բաժանուել ճռռանիս։ Ես նրան դրի ծոցումս։ Երազումս էլ տեսայ նրան և բաւական ժամանակ ճռռացրի։ Այդ քաղցր երազը դեռ չէր վերջացել, երբ մայրս զարթեցրեց ինձ, ասելով թէ օրը բացուել է։

Եկեղեցու մէջ այրվում էին հարիւրաւոր ճրագներ. ես զօռով ճանապարհ բացի մարդկանց միջով և մի անկիւնում կուչ եկայ. ձեռքս շարունակ գրպանումս էր՝ ճռռանիս լեզուակի վրայ։ Երբ «փառք 'ի բարձունս» սկսեցին, իսկոյն դուրս հանեցինք և սկսեցինք ճռռացնել. ես լաւ գիտէի, որ իմս ամենից լաւ էր ձայն հանում...

Երկու օրից յետոյ չորեքշաբթի էր։ Մայրս լողացրեց ինձ, գլուխս սանդրեց, հագցրաւ նոր արխալուղս։ Ճռռանի ժամանակն անցել էր, այլևս դիւր չէր գալիս մեզ. նրա փոխարէն կար մի ուրիշ ուրախութիւն. մենք պիտի գնայինք մի սուրբի տակ, որ գտնվում է Ղուշի քաղաքի մի ծայրում ու կոչվում է Քամու խաչ։

Մի մեծ բազմութիւն կար այնտեղ։ Մարդ ու տղայ, կնիկ ու աղջիկ խառնուած էին միմեանց հետ. միմեանց հրում էին, ամեն մէկն աշխատում էր առաջ անցնել և ամենից շուտ վառել իր մոմը և կպցնել սպիտակ քարին։ Ես էլ մօտեցայ մօրս հետ։ Սպիտակ քարի վրայ մէկը դրել էր թարմ կապուտաչեայ մանիշակների մի փոքրիկ փունջ։ Գարնան փութահասիկ կարապետները՝ այդ համեստ ծաղիկները, կարծես ասում էին, թէ իրանք էլ շատ ուրախ են, որ կարողանում են մարդկանց ուրախալի ժըպիտը գրգռել։ Իսկ վերևից լուսաւորում է ապրիլի հեզիկ արեգակը։ Նա էլ կարծես ժպտում է, ուզում է ցոյց տալ որ թէև հինգ ամսուայ միջոցում յաղթուած էր սպիտակազգեստ ծերուկից, բայց մի քանի օրուայ մէջ իրանն արաւ՝ թաց գետինը չորացրեց, մարդկանց տաքացրեց, թռչուններին հանեց ծառերի կատարները, որ այնտեղ գժուածի պէս ճղվղան։

Ուխտի ժամանակ հանդիպեց հօրաքոյրս, որ բերել էր և իր փոքրիկ աղջիկը։ Բաւական չէր, որ երեսիցս մի քանի անգամ պինդ համբուրեց, նա վեր առաւ ինձ և տարաւ իրանց տուն, ուր մնացի մինչև միւս օրուայ իրիկնապահը. գնացինք եկեղեցի և մի մի փոքրիկ փաթեթ կարագ իւղ ստացանք։ Ես վազեցի տուն, գրկեցի մօրս և

իւղը դրի նրա ձեռքում. նա նախ իր աչքերն օծեց, ապա իմ ամբողջ երեսն ու մազերը։

—Օրհնած իւղ է, զօրաւոր է, ասաց նա։

Նոյն երեկոյեան հայրս ու մայրս գնացին եկեղեցի. ինձ մօտ մնաց մեր Հարևանի աղջիկ Մարթան, որ ինձանից չորս տարով մեծ էր։ Երկար խօսեցինք, ծիծաղեցինք և յետոյ վերցրինք այն մեծ ու խոր դաւաթը, որի մէջ մայրս պահում էր մեր Հաւերի ձուանները։ Համրեցինք երկու անգամ։ Հինգ տասը և վեց հատ ձու էին ածել մեր Հաւերը։ Մի օրից յետոյ դրանք բոլորը պէտք է կարմրէին։ Ե՞րբ պէտք է լուսանայ այդ օրը։

ռաւօտեան մայրս չթողեց որ դուրս գամ սանդրեմ։

—Այսօր ոչ սանդրի ձեռք կրտան, ոչ սապնի, ոչ ասղի, ասաց նա.—այսօր չարչարուել է մեր Քրիստոսը. անիծուած օր է։

Իրաւ ուրբաթ օրը ոչ ոք չէր բանում. միայն մեր Հարևան դարբինը կէսօրից մօտ միքանի անգամ թրխթրխկացրեց իր մեծ սալի վրայ։ Ճաշից յետոյ մայրս մի փոքրիկ պողպատէ մատանի դրեց մատս և ասաց որ այդ օրը շինած պողպատէ մատանին չարիքից կրպահպանէ։ Մի այդ տեսակ մատանի էլ նա ունէր իր մատի վրայ։

Երեկոյին էլի գնացինք եկեղեցի։ Ո՞րքան տխուր էր այդտեղ։ Սև վարագոյր, միքանի Հատ մոմ, մի սև սեղան, որ դրած էր բեմի առաջ, ծածկած սև թաւիշով և

նրա վրայ սև շրջանակների մէջ դրած մի մեծ պատկեր. ամենն ինչ սև էր. քահանաների շուրջառներն էլ սև էին։ Ոչ ոք ձայն ու ծպուտ չէր հանում։ Մայրս հասկացրեց, որ այսօր սգի օր է, պէտք է խելօք մնալ։ Փամից յետոյ նա տարաւ ինձ մեծ սև պատկերի առաջ. ես համբուրեցի մեծ խաչը և յետ դարձայ։



Եռ մինչև եկեղեցի գնալը երկինքը սկսել էր պղտորուիլ. ճրագվառոցին ամպերը բոլորովին ծածկեցին կապոյտ կամարը. մինչև անգամ միքանի կաթիլ անձրև էլ եկաւ։

«Դէհ, վերջացաւ», ասացին ամենքը դժգոհութեամբ։ Եօթը երկար շաբաթներ սպասել էինք, որ այս մի երկու օրն ուրախանանք։ Մենք էլի ուրախ կըլինինք, բայց անձրևը, և մանաւանդ ցեխը պիտի արգելէին տանից դուրս գնալ. իսկ չորս հինգ ամիս շարունակ մենք փորձել էինք, թէ ի՞նչ տխուր բան է տանը նստելը։ Ես անհամբեր ականջ էի դնում, թէ երբ կընդհատուի անձրևի մեղմ խշշոցը։ Բայց երկար չկարողացայ. այնքան այդ միքանի օրերը վազվզել էի, որ նստած տեղս քնեցի. չեմ յիշում թէ ինչպէս էին դրել անկողնիս մէջ։

Առաւօտեան զարթնելուս պէս նայեցի պատուհանին. երկինքը բոլորովին պարզ էր, հեզասահ արեգակը բաւական բարձրացել էր։ Ուրախ-ուրախ վեր կացայ, հագնուեցայ որ դուրս գնամ։ Խոհանոցում մայրս սաստիկ զբաղուած էր. երբ մտայ այնտեղ, երկար տախտակի վրայ շարուած էին կարմիր գնդակներ։

«Կարմիր ձու, կարմիր ձու», գոչեցի ես Համարեա պարելով։ Մայրս երկու հատ տուեց ինձ, պատուիրելով, որ պահեմ մինչև իրիկունը։

Ես վազեցի մեր տան մօտ գտնուող մեր փողոցը։ Զարմանքից ձեռքերս տարածեցի և միքանի րոպէ մնացի սառած։ Աշխարհը կարծես ուրիշ տեսակ էր դառել. փողոցը բոլորովին սևացել էր. մարդկանց խմբեր յետ ու առաջ էին գնում, խօսում էին բարձրաձայն, ծիծաղում էին. որը ձուկ էր տանում, որը իւղ, որը Թաշկինակի մէջ բրինձ կամ միրգ։ Երբեմն-երբեմն երևում էին փոքրիկ գիսակաւոր, խարտեաշ, կապուտակ գառնուկներ. այնքա՜ն փոքր էին. նրանք մայում էին անուշ մանկական ձայնով։ «Ջա՛ն, ջա՛ն», ասում էինք ամենքս և վազում, ձեռքներս դնում էինք նրանց փափուկ մէջքերին, կամ բռնում էինք փոքրիկ դնչերից. իսկ նրանք «մա՛-մա՛» անելով վազում էին իրանց տէրերի առջևից։ Եւ մարդկանց ձայները, և գառների մայիւնը, երեխաների խաղերը, օդը, արևը, այդ ամենը ցոյց էր տալիս, որ մի ուրախութիւն կայ, մի մեծ տօն, որին երկար սպասել են ամենքը։

Էս օրից յետոյ մեր Հարևան Ֆաղիկ տատը կանչեց ինձ ու միքանի ընկերներիս և ցոյց տուեց իրանց համար գիւղից եկած Թուխ գառը. յետոյ իր Թոռը Սարգսին էլ մեզ հետ դրեց և պատուիրեց որ գառը զգուշութիւնով տանենք արածացնենք։

Մեզանից հեռու չէր կանաչազարդ դաշտը. շուտով հասանք այնտեղ ոստոստալով, Թռչկոտելով։ Մենք գտանք այդտեղ ուրիշ շատ գառնուկներ և երե-

խաներ։ Կանանչ խոտի վրայ խաղ սկսեցինք. բաւական տանջեցինք փոքրիկ հեղ կենդանիներին։ Այդպիսով չէինք նկատել, որ արեգակը մայրմտնելու վրայ է։ Ես վազեցի տուն, մայրս իսկոյն եկեղեցի ղրկեց. ինքը շատ զբաղուած էր. ձուկն էր եփում, փլաւի բրինձն էր թրջում, լուղ էր հալում...

Եկեղեցի մտնել չկարողացայ՝ տեղ բոլորովին չկար. կանգնեցի շէմքի մօտ և բերանաբաց նայում էի ներսին. կարծես եկեղեցում արև էր ծագել, այնքան շատ մոմեր էին վառել։ Ի՞նչպէս անոյշ ձայն էին տալիս աշակերտները, ի՞նչպէս բոլորը ուրախացան, երբ մեզանից մի բարակ ձայն «Քրիստոս յարեաւ» ասաց։ Հէնց որ մի քիչ նշխարք ստացայ, վազեցի տուն։ Կէս ժամից յետոյ սեղան նստեցինք. սկսուեց ամենից մեծ, ամենից փառաւոր տօնը, սկսուեց Հայոց Զատիկը։ Մուրթն սկսելուց յետոյ այստեղից այնտեղից սկսեցին հրացաններ արձակել։ Այդպիսի ճարճատիւն լսել էինք և բարեկենդանի վերջին կիրակի երեկոյին. այնժամանակ ուտիքն էին հալածում, իսկ այժմ պասը։ «Ամեն բան իր ժամանակին», կարծես ասում էին այդ հրացանները պլպլուն աստղերի տակ։ Դեռ նոր էր սկսել Զատիկը և որքա՜ն ուրախ էին մարդիկ։ Բայց դու տես էգուց ու միւս օրը, թէ ինչեր պիտի անենք...

ՀՐԱՀԱՏ

ԱՐԻՒՆ ԶԱՏԻԿԸ

Հա՛, մանկտիք,
Եկաւ Զատիկ,
Բերեց ամենիս
Ուրախ աւետիք։

Երկինքը պարզուել՝ էլ սև սև ամպեր
Չեն ծածկում նորա դէմքը կապուտակ.
Էլ չեն սարսեցնում մարդկային սրտեր
Ձմռան արհաւիրք, հողմունք բքաբեր...

Սարեր, հովիտներ, դաշտեր ու ձորեր
Ծածկուել են կանաչ թաւշեայ գորգերով.
Փայլուն արեգն էլ Զատկի գալուստը
Ողջունում է իր կենսատու լուսով։

Նայում ես չորս դիդ.—ՈՀ, ինչ ցնծալի
Տեսարաններ են բացվում քո առջև.
Թռչնոց ճլվլոց, գառաց բառաչիւն
Ամենքն էլ Զատկին տալիս են բարև...

Այո, այսօր է հրաշալի Զատիկ,
Ուրախ են ամենք՝ թէ ծեր, թէ մանկիկ.
Բայց միայն դժբախտ որբիկըն անտէր
Լռիկ թափում է աղի արցունքներ։

Հարուստ մանուկներ կոկիկ, զարդարուն՝
Ցաւի, տանջանքի չլսած անուն...
Որպէս թռչուններ, երգում են, պարում,
Բերկրալի սրտով Զատկին ողջունում։

Բայց որբի համար ո՞րտեղ է Զատիկ,
Զարդարուն զգեստ, անուշ ուտելիք.
Նա զուրկ ծընողից, զուրկ բարեկամից
Զունի ապաստան, դողում է ցրտից...

Գչլտած, կեղտոտ, հնամաշ լաթեր—
Ահա անբախտի զատկական շորեր.
Մի կտոր չոր հաց և մի բաժակ ջուր—
Ահա քաղցրահամ նրա կերակուր...

Խաղեր, զուարճանք, երգեր մանկական,
Կարմիր ձուաներ՝ նշանք զատկական,
Ո՞Հ, չկան, չկան, որ գէթ մի չնչին
Բերկրութիւն տային խեղճ որբի սրտին։

Դողդոջիւն ձեռքը երկիւղով պարզած՝
Նա թափառում է լայն փողոցներում,
Եւ դառն արցունքով աչքերը լցուած
Անցուդարձողից «չոր հաց» է խնդրում...

«Մի կտոր չո՞ր հաց»... լաւ խորհէք, մանկտի՛ք...
Տեսէ՛ք, ինչին է որբը կարօտում,
Եւ մի՛ մոռանաք, որ թշուառը միշտ
«Չոր հացովն է» Զատկին ողջունում...

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ԲՈՒՄ-ԲՈՒՄ

(Ժիւլ Քլարդեի)

I

ունաթափ, տարածուած ընկած էր երեխան իր փոքրիկ և սպիտակ անկողնի մէջ. ջերմից ընդլայնացած աչքերով նա նայում էր միշտ իր առաջ՝ հիւանդներին յատուկ և տարօրինակ ապշութիւնով, որով նրանք տեսնում են այն, ինչ որ աներևոյթ է առողջ մարդկանց աչքին։

Մայրը մահճին մօտ նստած իր մատերն է կծոտում՝ սրտագին ցաւերի աղաղակը խափանելու համար. և անձկութիւնով ու վշտերից խոցոտուած՝ հիւանդութեան սաստկանալն է նշմարում այդ փոքրիկ արարածի նիհարած և բարակ դէմքի վրայ. իսկ հայրը, որ մի պատուական գործաւոր էր, կարմրած աչքերով արտասունքն էր կուլ տալիս, որ այրում էր իր արտևանունքը։

Արշալոյսն էլ ծագում էր՝ աւետելով յունիսուայ մի լուսաւոր, քաղցր և գեղեցիկ առաւօտ. նա բոլոր իր շառաւիղներովը թափանցեց Մայրապետների փողոցի նեղ սենեակի մէջ, ուր մահամերձ տքում էր փոքրիկ Ֆրանսուան։

Եօթ տարեկան դեղնահեր և վարդագոյն այտերով երեխան դեռ երեք շաբաթ առաջ այնքան վառվռուն և ուրախ էր, ինչպէս մի ճնճղուկ, սակայն ջերմը յանկարծ կաշկանդեց նրան. երբ երեկոյեան տուն վերադարձաւ հասարակաց դպրանոցից, նա շատ ծանրացած էր զգում իր գլուխը, և ձեռքերի մէջ էլ՝ սաստիկ ջերմութիւն։

Տուն գալուն պէս ընկաւ անկողնի վրայ ու մնաց այնտեղ... խեղճ փոքրիկ։ Նա երբեմն ցնորքների մէջ՝ նայելով իր փոքրիկ կօշիկներին, որ մայրիկը խնամքով փայլեցրել ու դրել էր անկիւնում մի տախտակի վրայ, ասում էր.

—Այժմ կարող են դէն գցել փոքրիկ Ֆրանսուայի կօշիկները. փոքրիկ Ֆրանսուան այլևս դպրոց չի պիտի գնայ... երբէ՛ք... երբէ՛ք։

Այդ խօսքերը լսելով Հայրն աղաղակում էր. «պիտի լռե՞ս.. թէ ոչ»... իսկ մայրը՝ իր ոսկեհեր գլուխը, երեսը թաղում էր բարձի մէջ, որպէսզի փոքրիկ Ֆրանսուան չլսէ իր լացը։

Միայն այդ գիշերը երեխան ցնորք չունեցաւ. սակայն երկու օր է ինչ մի այլանդակ թմրութիւն՝ որ աւելի նման էր մահուան հրաժեշտին, անհանգստացնում էր բժշկին, այնպէս որ իբրևթէ՝ տակաւին եօթ տարեկան հասակում, հիւանդն արդէն ձանձրացած լինէր կեանքից։ Լուռ, խոնջուած և տխուր էր, նիհար գլուխը բարձի վրայ էր դրած. ոչինչ չէր ուտում. նրա նրբացած խղճուկ շրթունքների վրայ ոչ մի ժպիտ չէր խաղում այլևս. և կարծես աչքերը յառած, մի որևէ բան էր փնտռում շատ հեռուն...

—Գուցէ երկինքն է որոնում, մտածում էր ինքն իրան Մատլէնը սառսռալով։

Երբ նրան առաջարկում էին, որ կամ դեղ կամ օշա-

բակ և կամ փոքր ինչ մսաջուր ընդունի, նա մերժում էր, մերժում ամեն ինչ։

—Մի բան չե՞ս ուզում, Ֆրանսուա։

—Ո՛չ. ոչինչ չեմ ուզում...

—Բայցևայնպէս՝ պէտք է մի ճար մտածել, ասաց բժիշկը.—այս թմրութիւնն ինձ երկիւղ է պատճառում. դուք իբրև նրա ծնողքը, պէտք է լաւ ճանաչէք ձեր որդուն. որոնեցէք մի բան, որով կարելի լինի վերակենդանացնել այս փոքրիկ մարմինը, դէպի երկիր վերադարձնել այս հոգին, որ արդէն ամպերումն է թափառում։

«Որոնեցէ՛ք», ասաց կրկին բժիշկն ու հեռացաւ։

Խեղճ ու պատուական մարդիկն անշուշտ լաւ էին ճանաչում իրանց Ֆրանսուային. լաւ գիտէին, թէ որքան զուարճութիւն կըզգար փոքրիկը, եթէ կարողանար գնալ խաղալ ու կաքաւել անտառի մացառների մէջ. յետոյ քաղաք վերադառնալ՝ ծաղկներով գիրկը լիքը և Հայրիկի շալակը հեծած. նոյնպէս և Եղիւսեան դաշտերում, ներսից, Հարուստ մեծատանց տղաների հետ տեսնել պաճուճախաղերը...

Յակոբ Լըկրանը իր փոքրիկ Ֆրանսուայի համար՝ զանազան պատկերների, ոսկեզօծ զինուորների, չինական ստուերների խաղալիկներ էր գնել, որոնց շրջահատելով՝ գնում էր երեխի անկողնին վրայ ու պար ածում իր փոքրիկի տարտամ աչքերի առաջ, և իր արտասուելու ցանկութիւնը զսպելով՝ խեղճն աշխատում էր ծիծաղեցնել որդուն։

—Այ տեսնո՞ւմ ես. սա խորտակուած կամուրջն է. իսկ սա, օ, սա մի զօրապետ է. յիշո՞ւմ ես որ մի անգամ քեզ հետ մի զօրապետ տեսանք Բուլօնէի անտառում. լսի՛ր, եթէ դեղերդ լաւ ընդունես, մի զորդ զօրապետ կըգնեմ քեզ համար՝ կապուտակ բաճկոնով, ոսկեթել ուսնոցներով. ասա՛, ուզո՞ւմ ես որ քեզ բերեմ այն զօրապետին. պատասխանի՛ր։

«Ո՛չ», պատասխանեց մանուկը ջերմից այրուող ցամաք ձայնով։

—Ասա՛ ուրեմն, ուզո՞ւմ ես մի ատրճանակ, կլորիկ գնդիկներ, մի աղեղ. ասա՛։

«Ո՛չ»... կրկնեց իր բարակ ձայնով և գրեթէ անգթաբար։

Եւ այն ամենն՝ ինչ որ նրան ասում էին, ինչ խաղալիկ և փամփուշտ, որ նրան խոստանում էին... փոքրիկի ձայնը կրկնում էր. ո՛չ, և ո՛չ... մինչդեռ ծնողքը միմեանց երեսին էին նայում յուսահատաբար։

—Բայց ի՞նչ ես ցանկանում վերջապէս, իմ Ֆրանսուա, հարցրեց մայրը. տեսնենք կա՞յ անշուշտ մի որևէ բան, որ դու ցանկանայիր ունենալ. ասա՛ ուրեմն այդ բանը ինձ՝ քո մօրը։

Եւ խեղճ մայրը սիրասուն կերպով իր այտը դընում էր փոքրիկ հիւանդի բարձին, և միևնոյն հարցը մրմնջելով կրկնում էր նրա ականջին։

Այնժամանակ երեխան մի տարօրինակ ձայնով շեշտեց, և նստելով իր մահճի վրայ, անյագ կերպով կառկառեց ձեռքերը դատարկութեան մէջ դէպի մի անտեսանելի առարկայի, և միանգամայն պաղատագին և հրամայական՝ ձայնով գոչեց.

—«Բում-բո՛ւմն եմ ուզո՞ւմ»...

Բում-բո՞ւմ...

II

Ը մարդուն էր նայում խեղճ Մատլէնը, որ իմանայ, թէ ի՞նչ է արդեօք իր փոքրիկի ուղածը... չլինի թէ կրկին անգամ ցնորք լինի... այն ահարկու ցնորքը, որ գուցէ նորից է սկսվում։ Բում-բո՛ւմ...

Խեղճ կինը չէր հասկանում դրա նշանակութիւնը և վախենում էր այդ եզական բառերից, որոնց այժմ երեխան սկսել էր կրկնել մի հիւանդոտ յամառութիւնով. իբրևթէ մինչև այնժամանակ չկարողանալով պատկերացնել իր երազը, հիմա էլ ապաւինում էր նրան մի անընկճելի կամապաշտութիւնով։

«Այո՛, բում-բում... բում-բում, բո՛ւմ-բո՛ւմն եմ ուզում»։

Մայրը ջղոտ կերպով սեղմեց Յակոբի ձեռքը, ցածր ասելով նրան.

—Ի՞նչ է նշանակում այս, Յակոբ, ի՞նչ. մեր որդին կորած է։

Իսկ հայրը՝ իր գործաւորի կարծր երեսին վրայ ապուշ և գրեթէ մի երջանիկ ժպիտ ունէր, դատապարտեալի ժպիտի նման, որ փրկութեան մի նշոյլ է նշմարում։

Բում-բո՛ւմ... այո՛, յիշում էր Զատկի երկրորդ օրը, երբ առաւօտեան կրկէս էր տարել Ֆրանսուայինը. դեռ մանկան ականջումն էին ուրախ և մեծաձայն ծիծաղները. բզէզի քէփն եկած էր բարեմիտ խնդումից, երբ միմոսը՝ այն զարդասաճոյճ խեղկատակը, ոսկեխայտ սև տարազը հագած, քամակին կպցրած ունենալով մի մեծ թիթեռնիկ՝ փայլփլուն, այլադունուած և բազմերանգ... և այնպէս հագուած սո-

տոստում էր ձիերի ետևիցը, խտխտացնող հարուածներ տալով հեծեալի սրունգներին. երբեմն կանգնում էր օդի մէջ անյողդողդ՝ գլուխն ի վայր աւազի վրայ և ոտները բարձր։ Եւ կակուղ գլխարկներ դէպի վեր ջահն արձակելով, ճարպիկ կերպով ուղղակի իր գլխի վրայ էր դնում, և մինը միւսին վրայ ընկնելով՝ գլխարկներից մի աշտարակ էին ձևացնում միմոսի գանգի վրայ։—Եւ իւրաքանչիւր անգամ, ամեն մի խաղկատակին, իբրև մի յանգ՝ բո՛ւմ-բո՛ւմ էր աղաղակում. իր լայն, չարճճի և ծաղրածու պատկերին, մի զուարթ արտայայտութիւն տալով՝ կրկնում էր միևնոյն բառը, որին երբեմն ընկերակցում էին երաժշտների նուագարանները, երբ նա գոչում էր բո՛ւմ-բո՛ւմ։

Բում-բո՛ւմ։ Եւ ամեն անգամ որ նա ի տես էր գալիս, ամբողջ կրկէսը թնդում էր կեցցէների պայթիւններով, և փոքրիկ Ֆրանսուան էլ, ձայնը գցած երկար ծիծաղում էր, բո՛ւմ-բո՛ւմ... Հա՛, Հա՛, Հա՛...

Բում-բո՛ւմ. Հէնց իսկ այդ կրկէսի միմոսն էր՝ ամբողջ քաղաքի մի մասին զուարճացնող միմոսը, որին Ֆրանսուան ցանկանում էր տեսնել, ունենալ նրան. բայց թէ մինը, և թէ միւսը անկարելի էին փոքրիկ Ֆրանսուայի համար, որովհետև նա հիւանդ պառկած էր իր սպիտակ մահճի մէջ։

Երեկոյին Հայրը երբ տուն վերադարձաւ հետը բերեց Ֆրանսուայի համար շարժուն յօտերով, ոսկի աստղիկներով կարկատած մի շինծու միմոսի պաճուճապատանք, որ մի վաճառականոցի մէջ էր գտնել շատ թանկ՝ իր մեքենագործի չորեքօրեայ վաստակը վճարելով. բայց նա պատրաստ էր այդ կերպ խաղալիկներ քսան, երեսուն հատ էլ գնել, պատրաստ էր զոհել իր մի տարուան աշխատութիւնների արդիւնքը՝ կրկին մի ժպիտ վերադարձնելու համար իր սիրելի հիւանդի դունատ շրթունքների վրայ։

Երեխան մի բոպէ նայեց խաղալիկին, որի փայլը մրցում էր անկողնի ոպիտակ սաւանին հետ, յետոյ տրխ-ցրօրէն ասաց.

«Այդ բում-բումը չէ... ես... բում-բումն եմ ուզում։

Ա՜հ... խեղճ հայրը... եթէ կարողանար նրան փա-թաթել մի վերմակի մէջ և տանել մինչև կրկէս, ցոյց տալ միմոսի պար գալն ու նրա կաքաւը կրկէսի լուսաւոր ջահին տակ, և ասել Ֆրանսուային.

—Ահա՛ ուրեմն, տես և ուրախացիր...

Բայց նա աւելի լաւ բան արաւ, ուղիղ գնաց կրկէս, իմացաւ այնտեղ միմոսի ուր բնակուելը, և յուզմունքից թուլացած ծնկերով բարձրացաւ այն տան սանդուղնե-րով, ուր դերասանն էր բնակվում Մօնմարթրի թաղի մէջ։ Թէպէտ շատ յանդուգն ձեռնարկութիւն էր այդ իր կող-մից. սակայն նա խորհում էր, վերջիվերջոյ, չէ՞ որ դե-րասանները շատ անգամ հրաւիրուելով գնում են իշխան-ների և հարուստների սրահների մէջ երգելու, կամ մե-նախօսութիւններ արտասանելու. թերևս միմոսն էլ՝ որի ամեն պահանջը պատրաստ էր հատուցանել, հաւանի գալ և այցելել փոքրիկ Ֆրանսուային. ի՞նչ փոյթ, թէ ի՞նչ ըն-դունելութիւն պիտի տեսնէ միմոսից, որովհետև մի որև-է հասարակ գործաւորի ներկայութիւնը բում-բումի տան մէջ տարօրինակ է... Է՜հ...։

Բայց միմոսն այն տան մէջ այլևս այն բում-բումը չէր, այլ կոչվում էր պարոն Մօրէնօ և իր դերասանական գեղեցիկ բնակարանի մէջ էր. գրքերի և ճարտար փորա-գրուած պատկերների երևոյթը, միով բանիւ, մի արուես-տաշքեղ կահք, մի բարեկիրթ մարդու արժանաւոր շրջապատ էին կազմում նրան, որ ընդունեց գործաւորին իր առանձնասենեակի մէջ, որ իր աջառ տեսքովը՝ աւելի մի բժշկական աշխատարանի էր նմանում։

Յակոբը նայում էր միմոսի երեսին՝ ամենին նմա-

նութիւն չգտնելով նրա և կրկէսի մէջ տեսած դէմքի հետ, և շուարած, ձեռքի գլխարկի յետ էր խաղում— միմոսն սպասում էր. այն ժամանակ Հայրն սկսեց ներողութիւն խնդրել, ասելով, որ «ճշմարիտ, քեզ զարմանալի պէտք է թուի իմ խնդիրքը... ներեցէք... թողութիւն... բայցևայնպէս՝ խնդիրը մի փոքրիկ երեխայի մասին է. ուղիղ է որ ծանր է այդ խնդիրը, սակայն մի փոքրիկ մանուկ, մի սիրուն փոքրիկ, և շատ խելացի է, պարոն, շատ. դպրոցում միշտ յառաջընթաց, բացի թուաբանութիւնից, որին չէ կարողանում ըմբռնել... սաստիկ երևակայող է, սաստիկ... այո. և ապացոյցը այն է որ... ապացոյցը...»

Յակոբ սկսել էր վախենալ, թոթովել. բայց յետոյ քաջասրտութիւնը հաւաքելով ասաց.

— Ապացոյցը այն է՝ որ ցանկանում է ձեզ տեսնել. երևակայեցէք... միայն ձեր վրայ է մտածում, դուք միշտ իր աչքի առաջ կանգնած էք մի լուսաւոր աստղի նման, որին նայում է միշտ՝ ցանկանալով նրան անպատճառ ունենալ:

Խեղճ Հայրը, երբ խօսքը վերջացրեց, սաստիկ գունաթափ եղաւ, և քրտինքի խոշոր կաթիլներ էր զգում իր ճակատի վրայ, չէր համարձակվում միմոսի երեսին նայել, որնոր ուշադրութիւնով դիտում էր գործաւորին, և արդեօք ինչ պիտի լինէր բում-բումի պատասխանը. եթէ յանկարծ իրան ճանապարհ դցէր, դուրս հանէր դռնից իբրև մի յիմարի:

Սակայն յանկարծ բում-բումը հարցրեց.

—Ո՞ւր է ձեր բնակարանը:

— Ո՜հ... այստեղ. շատ մօտիկ... Մայրապետների փողոցում:

—Գնանք ուրեմն, ասաց միմոսը. եթէ ձեր որդին ուզում է տեսնել բում-բումը, լաւ ուրեմն, պիտի տեսնէ:

III

Երբ սենեակի դուռը բացարին Միմոսի առաջ, Յակոբը շշկլած և ուրախ աղաղակելով՝ ասաց որդուն.

—Տես և դոհ եղիր, բզեզ. ահա վերջապէս բերի բում-բումը։

Մանուկը մի ուրախառիթ փայլ ունեցաւ իր երեսի վրայ, և մօր բազուկը նեցուկ անելով, գլուխը դէպի ներս մտնող երկու մարդկանց դարձրեց, ու մի բոպէ որոնելով գտնեց այն անձին, որ իր հօրը մօտ կանգնած էր իր սև բաճկոնովը, որի բարի պատկերը, ժպտում էր իրան։ Բայց փոքրիկը նրան չէր ճանաչում. և երբ ասացին թէ նա է բում-բումը, տխուր և լքեալ գլուխը՝ ծանրաբար բարձի վրայ դրեց և շարունակեց մնալ այնտեղ, աչքերը պիշ բացած. այն գեղեցիկ, մեծ ու կապոյտ աչքերը, որ կարծես փոքրիկ սենեակի պատերից այն կողմն էր ուզում տեսնել. և փնտռում ու որոնում էր միշտ բում-բումի ոսկեխայտ զգեստն ու մեծ թիթեռնիկը։ Եւ առաւել վշտահար, քան ցամաք ձայնով. «Ո՛չ, պատասխանեց երեխան, ո՛չ, այդ չէ՛ բում-բումը։

Միմոսը փոքրիկի մահճի մօտ կանգնած՝ խոր, լուրջ, և անհուն քաղցրութիւնով նայում էր փոքրիկ հիւանդի երեսին. նա շարժեց գլուխը և վհատուած ու անձկոտ ծնողների վրայ մի հայեացք ձգելով, ժպտաց ու ասաց.

—Իրաւունք ունի, սա բում-բումը չէ՛. ու դուրս ելաւ սենեակից։

Այնժամանակ երեխան մի փոքրիկ հրեշտակային ձայնով սկսեց կրկնել. «Ո՛չ. ո՛չ, այլևս չէ՛, չեմ տեսնելու

բում-բումին... բում-բումը թերևս այնտեղ է, այնտեղ, ուր փոքրիկ Ֆրանսուան էլ պիտի գնայ շուտով...»

Եւ դեռ կէս ժամ չկար որ միմոսն անհերևոյթացել էր, երբ յանկարծ, բուռն կերպով դուռը բացուեց կրկին և միմոսը՝ իր ոսկեխայթ տարազով, գլխի վրայ դեղին ցցունքով, կրծքում և քամակում ոսկի թիթեռնիկներն փայլփլայլ, բերանը մի գզրոցի չափ լայն բացած ժպտալով ներս մտաւ. քիթն ու երեսը ալիւրոտած բում-բումը, իսկական բում-բումը, Հասարակ ժողովրդեան թաղերի բում-բումը, կրկէսի բում-բումը, փոքրիկ Ֆրանսուայի սիրական բում-բումը երևցաւ վերջապէս. Ֆրանսուան նստեց իր սպիտակ մահճին վրայ. աչքերը կենսատու ուրախութիւնով լիքը, մերթ լալիս էր, մերթ ծիծաղում, և նա երջանիկ էր և փրկուած. խփեց մանուկը իր երկու նիհար ձեռքերը միմեանց, կեցցէ գոչելով իր մանկական զուարթութիւնով, որ յանկարծ պայթում էր և փայլում մի օդային փամփուշտի նման։

Բում-բում... նա՛ էր, նա՛. այլ այս անգամ խաբուած չէր. իսկական բում-բումը կանգնած էր իր աչքի առաջ։

—Կեցցէ՛ բում-բումը... բարի լոյս, բում-բո՛ւմ...

IV.

Յն օրը բժիշկը կրկին եկաւ այցելելու Հիւանդին, որի անկողնի մօտ մէկ միմոս զտաւ նստած. նա իր ալիւրոտած սպիտակ ռէխովը տակաւին շարունակում էր ծիծաղեցնել փոքրիկին, և դեղի բաժակի մէջ մի շաքարի կտոր հալեցնելով ասում էր.

— Տեսնո՞ւմ ես, փոքրիկս, եթէ այս դեղը չընդունես, այլևս բում-բումը չպիտի վերադառնայ քեզ տեսնելու։

Եւ երեխան ընդունում էր դեղը։

—Համեղ է, այնպէս չէ՞։

—Այո՛, բում-բում, շատ համեղ է, շնորհակալ եմ, հի՜, հի՜, հի՜...

—Պարոն բժիշկ, ասաց միմոսը, մի՞ք նախանձիլ խնդրեմ, ինձ այնպէս է թւում, թէ իմ ծամածուռ ծիծաղներս այնքան են օգնում նրան, որքան ձեր դեղերը։

Եւ Հայրն ու մայրը արտասվում էին. բայց այս անգամ ուրախութիւնից։

Եւ մինչև Ֆրանսուայի բոլորովին առողջանալ ու ոտի կանգնիլը, մի կառք ամեն օր գալիս և կանգ էր առնում Մայրապետների փողոցի դորձաւորի դռան առաջ. մի մարդ իջնում էր այդ կառքից, իր մեծ վերարկուի մէջ փաթաթուած և օձիքը բարձր՝ ծածկելու համար իր կրկէսական միմոսի տարազն ու ալիւրոտ երեսը։

Իսկ երեխան երբ առաջին անգամ սկսեց դուրս գալ տանից, Հայրն ասաց վարպետ միմոսին.

— Ի՞նչ կերպով կարող եմ յայտնել ձեզ իմ երախտիքը. վերջիվերջոյ ես ձեզ շատ եմ պարտական։

Միմոսն իր հերքիւլեան ձեռքերը ծնողին երկարացնելով ասաց.

—Նախ՝ մի բարեկամական ձեռն կառկառել ինձ.—և փոքրիկի այտերի վրայ, որոնց վարդագոյն եռանդն սկսել էր վերադառնալ, երկու խոշոր համբոյր զետեղելուց յետոյ, յարեց ծիծաղելով.—և յետոյ՝ իբրև վարձատրութիւն թոյլ տուէք ինձ տալել այցատոմսիս վրայ. Բո՜մ-բո՜մ՝ Գիպոնական ադրօքամ, անչնական և մանաւոր բժիշկը Ֆրանսուայի։

Ֆրանս. Թարգմ. ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ



ՍՈԽԱԿՆԵՐ

(Կրիլովից)

Մի ճարպիկ թռչնորս գարնան օրերում
Անտառների մէջ սոխակ էր որսում.
Խեղճ սոխակները վանդակում փակուած,
Ճռվողում էին ճարները կորած.
Թէև, ի Հարկէ, նոքա կուզէին,
Որ անտառներում ազատ ման գային.
Բանտում փակուածը ի՞նչ սիրտ կունենայ,
Որ դեռ երգի էլ, կամ զուարճանայ։
Բայց էլ ի՞նչ անէին,
Որ գոնէ չերգէին,
Եւ իրանց սև օրը
Միասին չողբային։
Նրանցից միայն մէկը չէր երգում.
Նա իր սիրելու կարօտն էր քաշում.
Արտասուաթոր աչքերով
Նա դաշտերին էր նայում,
Գիշեր ցերեկ տանջուելով,
Ընկերուհուն էր յիշում։
Իր ընկերուհուց խեղճն անջատուած,
Հալվում, մաշվում էր վանդակում փակուած։

Անբախտ սոխակը վերջը մտածեց.
«Այսպէս չի լինիլ, ինքն իրան ասեց,
Անխելք մարդիկն են շարունակ տխրում,
Իսկ խելօքները հնար են փնտրում,
Որ դժբախտութեան
Մի կերպով վերջ տան.
Կարծեմ, ես ինքս էլ, եթէ աշխատեմ,
Իմ թշուառութեան մի ճար կըգտնեմ։
Մեզ խօմ չեն բռնել, որ մեր միսն ուտեն,
Այլ որ մենք երգենք, իրանք էլ լսեն։
Մեր այս պարոնը, ինչպէս կերևի,
Երգեր լսելու սաստիկ սէր ունի.
Եթէ իմ ձայնով ես սորան դիւր դամ,
Փոխարէնն անշուշտ պարգև կըստանամ.
Եւ նա վերջ կըտայ իմ ստրկութեան»։
Հաւատացնում էր սոխակն ինքն իրան։
Եւ ոգևորուեց,
Երգել սկսեց.
Եւ անուշ ձայնով,
Սիրուն երգերով
Նա իր պարոնին զմայլեցրեց։
Պարոնն էլ միայն նորան հաւանեց
Եւ լաւ խնամեց.
Իսկ միւսներին—
Վատ երգողներին
Իսկոյն արձակեց։
Եւ այնուհետև մեր խեղճ սոխակին
Աւելի ամուր ու պինդ փակեցին։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԵՐԳԻՉ ՏՂԱՆ



Էև գիժ մարտի սկիզբն էր, բայց օրը տաք էր և խաղաղ։

Մի խումբ երեխաներ՝ ուրախ ճիչ ու աղաղակ բարձրացրած խաղում էին ընդարձակ պատշգամբի վրայ։ Նրանք ամենքն էլ ուրախ էին, ամենքն էլ զուարթ էին. նրանք զգում էին որ սիրուն գարունը մօտեցել էր արդէն։

Նրանցից միքանիսը ձիի-ձիի էին խաղում, միքանիսն առաջկտրուկի, ոմանք էլ՝ պատշգամբի մի կողմի վրայ հաւաքուած, արևկող էին արել և ժպտալով մտիկ էին տալիս իրանց խաղացող ընկերներին։

Այդ րոպէին ամեն ինչ խաղաղ էր բնութեան մէջ. և միայն երեխաներն էին, որ իրանց աղմկալի ճչոցով խանգարում էին այդ տիրող խաղաղութիւնը։

Հէնց այդ միջոցին էր որ երկու տղայ մտան գա-

ւիթ։ Մտնողներից աւելի տարիքովը գնում էր առաջից, իսկ միւսը՝ առջևից գնացողի մեկնած ձեռքը բռնած, անվստահ քայլերով նրան էր հետևում։ Հասնելով երեխաների խաղատեղ դարձած պատշգամբի տակ, մանաճողը տղան կանգ առաւ և իր փոքրիկ ուղեկցին ասաց հրամայաբար.

«Երգիր»։

—Ի՞նչ երգեմ,—պատասխանեց նա ու ականջ դնելով երեխաների խօսակցութեանը, աւելացրեց.—նրանք ինձ չեն հասկանալ։

Այդ ասող տղան կոյր էր երկու աչքով. նա մի անզարդ չոնգուր ունէր իր ուսին, հագուստը շատ հասարակ էր և բոլորովին մաշուած, իսկ գլխարկը մի կիսամաշ սև թասակ էր։

«Դէ երգիր, ասում են քեզ», ստիպեց մանաճողը։

—Լա՛ւ. ինչ երգեմ. նրանք հայերէն չգիտեն։

«Ինչ ուզում ես երգիր, միայնթէ երգիր»։

—Բայց, դու ինչո՞ւ ինձ ասացիր՝ դնանք այն հայ-երեխաների մօտ երգիր, քանի որ այդ քո հայ-երեխաները հայերէն չգիտեն։

«Տօ դէ... քեզ ասում են երգիր, երգիր էլի։ Էլ նոր ինչ ես քարոզներ կարդում...

—Եթէ այդպէս է, դու ինքդ երգիր այդպիսիների համար. իսկ ես երգողը չեմ, եռանդով պատասխանեց կոյր տղան։

«Տօ, կոյրը ես եմ, թէ դու»։

Այդ անարդար յանդիմանութեան վրայ խեղճ տղան ցնցուեց, և այլևս ոչինչ չպատասխանելով՝ վերցրեց թասակը, ուսից վերբերեց չոնգուրը, մի լաւ լարեց և աչքերի սպիտակուցները յառելով տարածութեան մէջ մի կէտի վրայ՝ սկսեց շուտ-շուտ ածել ու հետն էլ՝ առանց հասկանալու երգել, աւելի ճիշտն՝ աղաղակել։ Բայց որով-

հետև նա երգում էր իրան անհասկանալի մի օտար լեզուով, այդ պատճառով նրա երգը զգացմունքից զուրկ էր բոլորովին։

Երեխաները սուս արած մտիկ էին տալիս երկուսին էլ, բայց մի առանձին տխրութիւնով էին նայում կոյր, վոքրիկ երգչին. և նրանց անմեղիկ սրտները ճմլվում էր նրա դրութեան վրայ։

Բայց ահա երգիչը վերջացրեց օտար լեզուով երգածը, միքիչ շունչ առաւ և նորից սկսեց երգել. միայն այժմ ոչ թէ օտար, այլ իր և իր հասակակից ունկնդիրների մայրենի լեզուով։ Երգելիս հետզհետէ նրա դէմքն սկսեց վոխուել. նա ոգևորուեց, բայց և տխրութեան մի այնպիսի քօղ պատեց նրա երեսին, որ երեխաների վրայ ևս ազդեց։

Նա այժմ իր աչքերը մեծ-մեծ և աննպատակ բանալու վոխարէն, խոնարհեցրել էր և երգում էր այնպէս զգացմունքով, ձայնը տեղ-տեղ այնպէս անուշ, այնպէս քնքշօրէն էր դողդողում, որ իր նման մատաղ ունկնդիրների մատաղիկ սրտներն սկսեցին թրթռալ։

Երեխաները՝ լուռ, ամբողջովին ականջ դարձած լսում էին...

Նա վերջացրեց երգը, «թազանէն» կոյցրեց իր տեղը, չոնգուրը զցեց ուսն ու պատրաստուեց գնալ։

Երեխաների միջից մի արծաթ դրամ թռաւ և զրընգալով ընկաւ նրա ոտերի մօտ. մանուածողը վերցրեց դրամը և երեխաներին գլուխ տալով՝ տուեց նրան։

Երգիչ տղան արդէն գնացել պրծել էր, բայց երեխաները՝ մոռացած իրանց խաղը, երկար ժամանակ դեռ էլի լուռ կանգնած մտածում էին «ով» վրայ և աչքները յառած ու մտախոհ նայում էին այնտեղին, ուր «ով» էր կանգնած...։

Փոխադր. ԼԵՒՈՆ Մ.-Ա.

ԾԵՐՈՒՆԻ ՍԱՐԳԻՍ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

նցնում են էլի միքանի շաբաթներ։ Արեգակը կէս-օրին ուղիղ գլխներիս կանգ-նած՝ սաստիկ այրում է. տաքացած օդը խեղդուկ է դառնում, նրա միջում բամբակի կարճ ու բարակ թելեր են լող տալիս. մեր Զառիկը բերանը բաց արած, լեզուն դուրս կախած հռհռում է, լեզուի ծայրից շողիկ է կաթկթում. նա մերթ պառկում է, մերթ վազում է, յաճախ փռշտում, և թաթովն անդադար քիթը տրորում։

Այրս ինձ արգելում է ցերեկը գլուխս բաց արևի տակ խաղալ. մենք իրար հետ միացած, մեր մայրերից ծածուկ գետն ենք գնում, սառը ջրի մէջ լողանում, զո-վանում։ Եթէ մայրս իմ լողանալը իմանայ, անպատճառ

կրծեծի. նա ասում է, թէ ծովի մայրն իր երկար մազերի մէջ փափաթելով՝ ինձ գետի յատակը կրտանի, կրխեղդի և կուտի։ Ես թէև նրան հաւատում եմ, բայց շատ եմ ցանկանում լողանալ. բացի նրանից, ես չեմ կամենում ընկերներից բաժանուիլ. չեմ կամենում, որպէսզի նրանք լողանալուց յետոյ իմ առաջ պարծենան, ինձ «վախկոտ» կոչեն, իսկ ես հարկադրուած լռեմ։ Լողանալուց յետոյ մենք աշխատում ենք որքան կարելի է շուտ չորացնել մեր գլխի մազերը, որովհետև մայրերս նրանց նայելիս միայն կարող են գուշակել՝ լողացել ենք թէ ոչ։ Գետի ափի մանրիկ, կլորիկ աւազի քարերը մեզ շատ սիրելի են երևում. մեր գրպաններն ամեն անգամ նրանցով լցվում են։ Նրանցով մենք փորձում ենք, թէ ով ինչքան հեռու կարող է քար ձգել, նշան առնել։ Նրանք մեր զէնքերն են. շները, խոզերը, կատուները շատ լաւ են իմանում նրանց զօրութիւնը։ Այնտեղի մօտ՝ ուր մենք լողանում ենք, շատ նաւեր են կանգնած լինում, նրանց վրայի մարդիկն անհասկանալի լեզուներով են խօսում, մեծ բազմութիւնով փոքրիկ տակառներ են հանում նաւերից և գետից ոչ հեռու շինած նկուղների առաջ դարսում. ասում են թէ այդ տակառների մէջ մեղր է լցրած։

Ժամանակ-ժամանակ, երբ օդի միջում խեղդելու չափ շոգ է լինում, պայծառ երկնքի երեսին արծաթի և ոսկու զանգուածների նման, չեմ իմանում ո՞րտեղից, սպիտակ, դեղին ամպեր են երևում։ Նրանք շատ թեթև են, որովհետև սաստիկ արագութիւնով թրթռում են. նրանք՝ քանի միմեանցից հեռու են, ծիծաղում են, զուարճանում են. բայց հէնց որ՝ երևի մեզ նման խաղեր խաղալու ցանկութիւնով, մի տեղ են հաւաքվում, իսկոյն կռիւներ են սարքում։ Մէկ-մէկու ետևից վազվզելով, կուռ-կռի, թևթևի փաթաթուելով, միմեանց կողերը խտրտում են, պուկպկի բռնած՝ իրար խեղդում են, ցաւերից բարկացած՝

սատանիկ գոռգոռում են և վերջիվերջոյ երկիւղալի կռիւներ սարքում։ Նրանց կռիւների ձայնը սարսափելի է. նրանք հրացաններ են արձակում միմեանց վրայ, հրացանների կայծերը հեղեղների նման մեր եկեղեցու գմբէթի քամակին են թափվում։

Սատանաներն ամպերի կռիւներից ուրախանալով, չար քամու թևերի վրայ նստած, հաւաքվում են մեր փողոցի վերի ծայրը. այնտեղից փոշու սիւներ կազմելով օդի մէջ են բարձրանում, այստեղ այնտեղ ուրախ-ուրախ թըրթռում, թափառում, պար դալիս, ջահիլ սատանաների հարսանիքներ կատարում։ Մենք՝ երեխաներս, փոշու այդ շարժական սիւները տեսնելիս՝ «սատանի հարսանիք» բղաւելով, իսկոյն դանակներ առած նրանց վրայ ենք յարձակվում և բոլոր ուժով դանակները նրանց մէջ ձգում։ Մենք կամենում ենք նրանցով ուրախ սատանաների եղունգները կտրել, առնել. մայրերս ասում են, թէ նրանցով բժշկութիւններ կարելի է անել։ Բայց ահա սատանաները քամու հետ թռչում հեռանում են, փոշու սիւները նոյնպէս անհետանում։ Մենք աչքներս չորս բացած այս կողմ այն կողմն ենք վազվզում, սատանաների եղունգներ փնտրում...

Ահա Մըկըրը կայծքարի կտոր գտնելով՝ «գտայ» բըղաւում է անսովոր յափշտակութիւնով, ետևը չնայած, առանց ոտների տուն է վազում։ Նրա ձայնը լսելիս, մենք մի տեսակ ծանր զգացմունքով վրդովվում ենք, միքանի րոպէ նրա քամակիցը նայում։ Մեզնից միքանիսը Մըկըրի ետևից վազում են՝ սատանի եղունգը նրանից խլել են կամենում, բայց նա շուտով փախչում, անհետանում է։ Գևոջանը կէս ճանապարհին ոտը քարի զարնելով արիւնոտում է և գլորուելով գետին է փռվում. նա պառկած տեղը լաց է լինում, «ը՛հը ը՛հը» տքտքում է, արցունքները բռնցքով սրբում։ Մենք նրա վրայ ուշադրութիւն

չենք դարձնում, մենք էլի սկսում ենք կրկնապատկած եռանդով սատանի եղունգ փնտրտել, բայց իզուր որովհետև չենք գտնում և Մրկրրի բախտին ենք նախանձում։

Զմբլենց Գասպարը սատանի եղունգ չգտնելուց զատ, փոշու մէջ ձգած դանակն էլ կորցնում է, երկար բարակ նրան փնտրտում և չի գտնում. յետոյ իմ կողքին կանգնած, մօրից ուտելու ծեծը մտաբերելով՝ սկսում է կամաց-կամաց վերի պռօշը ուռցնել, քթի տակից վար կախել. ես փորձից իմանում եմ, թէ դա ինչ է նշանակում, նա լաց լինել է կամենում։ Ես նրան ասում եմ, թէ անպատճառ սատանաներն են գողացել նրա դանակը և հետները տարել։ Այդ լսելով նա հանգստանում է, ուռած շրթունքին էլի առաջուայ կերպարանքը տալիս։ Յետոյ մի քանի երեխաներ միաբանուելով՝ կրկին սկսում ենք Գասպարի դանակը փնտրել։ Այդ միջոցին մեր մօտից Ժամկոչ Թաթոսն է անցնում, եկեղեցու սիւնի մօտին նա վար վեր է կռանում, էլի անցնում գնում։ Նրա ձեռին մենք ոչինչ չենք նկատում, մենք մտածում ենք սատանին խաբել, դանակը խորամանկութիւնով ձեռիցը ետ առնել. դրա համար բոլորս միասին բարձր ձայնով շարունակ երգել ենք սկսում հետևեալ՝ էլի մեր շարադրած չորս տող ոտանաւորը։

Սատանայ, սատանայ,
Մեծ ամանով «փախլավայ»,
Կէսը քեզի, կէսը մեզի,
Աւելցածն էլի քեզի։
—Սատանայ, սատանայ... և այլն։

Բայց սատանան մեզանից աւելի խորամանկ է լինում, մեր կեղծ խոստմունքներից չի խաբվում, Գասպարի դանակը չի վերադարձնում։ Յանկարծ երկնքի հարաւային ծայրում Եղիա մարգարէի ոսկի խարազանի ծայրն է «եալթ» անում ու էլի անհետանում։ Մենք գլխարկներս

Հանած երեսներս ենք խաչակնքում, երկնքին մտիկ տալիս... Նա մթնել է. ամպերը հարբած մարդերի նման կատաղել են, կոկորդներն ուռցրած հա՛ գոռում են, հա՛ գոռում, երկինք գետին թնդացնում։ Մենք՝ սատանի եղունգ, դանակ բոլորովին մոռացած եկեղեցու դուռն ենք վազում, մի անկիւնում «վուչ» եկած, գոռգոռոցի վերջանալուն սպասում։... Ստուած չար ամպերի վրայ բարկացել է, Եղիա մարգարէին ուղարկել է, որ նրանց պատժէ։

Եղիա մարգարէն ոսկէ խարազանը ձեռին երկնքի մի ծայրից միւսն է վազվզում, չարացած ամպերին ծեծելով, ծեծելով երկնքից վար թափում։

Ամպերը լաց լինելով երկնքի երեսից անհետանում են, նրանց արցունքներն անձրևի կաթիլներ դառնալով ցած են իջնում, գետնի վրայ թափվում։

Մենք գլխներս բացած, անձրևի տակ ուրախ-ուրախ վազվզում ենք. «ա՛նձրև, ա՛նձրև, վար, վար, ա՛նձրև, ա՛նձրև, վեր, վեր» կանչում ենք, մինչև որ նա դադարի։ Դադարելուց յետոյ մեր փողոցի մէջտեղից հեղեղն սկսում է հոսել։ Մենք փորձով իմանում ենք, որ նա քաղաքի վերի մասերից ինչ որ պատահում է, բոլորը հաւաքելով, հետն առած դէպի գետն է տանում։ Վարտիքներս ծնկներից վեր ծալելով, մենք նրա հոսանքի մէջ ենք մտնում և շատ մեխեր, բանալիներ և ուրիշ բաներ ենք գտնում...

(Կըշարունակուի)։

Ց. ԴՈՒՐԲԱԽԵԱՆ

ԽԵԼԱԳԱՐ ԲԷՍՍՕ

Օսական աւանդութիւն

(Վս. Ս. Սօլովիէվի)

Ա

արնանային արեգակը, որը բարձրացել էր հարաւային երկնքի մուք կապուտակում, տաքացնում էր իր ուղղաձիգ ճառագայթներով Կովկասի լեռնային գառիվայրերը։ Այդ ճառագայթները խորը մրտնում էին գետնի մէջ և կանչում նրա միջից բոլոր թմրած ոյժերը։ Երկինքն էլ տալիս էր տաքութեան և աշխարհին իր ամեն մի կտոր հողը. մեծ հրաշագործութիւններ էին կատարվում ամենայն տեղ, ուր միայն կարողանում էր իր համար ճանապարհ գտնել հզօր և լենդանարար ճառագայթը։

Այնտեղ, ուր շատ ժամանակ չէր որ խաղաղ էր և դատարկ, ուր անշարժ թագաւորում էր մահուան խաղաղութիւնը, այժմ կեանք կար. փայլում էին անչատուած կանաչի և թառամած ծաղիկների գեղեցիկ գոյները, թռչում էին և սողում անհամար ու անթիւ զանազանագոյն արարածներ։ Դեռ այս բոլոր արարածները չկային աշխարհում. կարելի է նախընթաց օրը շատերը նրանցից պէտք է ոչնչանային մէկ օրից յետոյ, բայցևայնպէս՝ առանց իմանալու երէկուայ և վաղուայ մասին, նրանք բոլորն էլ դողդողալով՝ զուարճանում էին կեանքով, զուարճանում էին արեգակով և զգում էին, որ կեանքն ու արեգակը միանման բաներ են։

Միայն մարդիկ չէին հասկանում այդ. նրանք շատ շոքում էին և թաք էին կենում իրանց տնակներում։ Ցոյլ օսերը պառկելով շուաքում ծածկոյթի տակ՝ փայտեր էին տաշում աննպատակ, որը շատ տարիներից ի վեր նրանց սիրելի պարապմունքն է կազմում։ Մինչև անգամ կանայք,—որոնց վրայ է ընկնում առհասարակ ամենածանր աշխատանքը օս ընտանիքներում՝ ինչպէս տանը, նոյնպէս և դաշտում,—համոզուած լինելով՝ որ իրանց վրայ ոչ ոք չկայ նայող, որովհետև մարդիկ այնպիսի շոքում ոչ մի ժամանակ տեղից չեն շարժվում, հաւաքուել էին երեխաների հետ տնակների—կանանց բաժանմունքների մէջ և խօսում թէ իրանց և թէ հարևանների գործերի մասին։ Երեխայքը՝ որոնք վազվզել էին և յոգնել շոքից, քաղցր քնած էին...



Բ

Իայն ամենքին չէր տրուած կարողութիւն՝ անձնատուր լինելու ծուլութեան ծածկոյթների տակ։ Բարձր՝ աուլների վրայ, սարերում, ապառաժների միջի գալար ճանապարհով առաջ էր գնում Բէսսօ Հովիւը՝ քշելով իր առաջից այծերի մի հօտ. նա սևաչեայ էր, արեգակից այրուած մի մանուկ, ուժեղ և աշխոյժ երեխայ, այն վսեմ, իրար վրայ ընկած սարերի որդին։

Նա ամենավոքրն էր ընտանիքում և մեծերը նրան հրամայեցին՝առաւօտը շատ վաղ գնալ սարերը և այծեր արածացնել։ Լսել այս տեսակ հրամանը, չնայելով որ դեռ նա սրրտանց կամենում էր ծուլանալ, բոլորովին անկարելի էր. և ինչպէս չլսե՞լ,— կրծեծէին, դարձեալ դուրս կանէին սարը։

Եւ ահա նա լուացուեց, հագնուեց, վերցրեց իր հետ մի տոպրակ քանիմի նոր թխած խմորեղէն, մի կտոր պանիր և գնաց ծանօթ ճանապարհով, բարձրանալով աւելի և աւելի, կռուելով յաճախ իր այծերի հետ,

թռչելով անդունդների վրայով, բարձրանալով մէկ-մէկ անգամ գրեթէ ուղիղ բարձրութիւնով։ Այն վատ տրամադրութիւնը, որով Բէսսօն դուրս եկաւ տանից, շուտով անցաւ։ Նա սիրում էր իր սարերը, նրա համար մի առանձին ուրախութիւն էր թռչկոտալ և մագլցել. ուրախութիւն էր նրա համար երգել գեղեցիկ երգեր, որոնց մէկ-մէկ անգամ կրկնում էին լեռնային արձագանքները։

Նա չէր զգում յոգնութիւն, չէր զգում և տապ, մանաւանդ այն բարձրութեան վրայ՝ որի վրայ նա այժմ բարձրացաւ իր հօտի հետ, աւելի հով էր, քանթէ ցածրում — սարերի ստորոտներում։ Պարզ օդը զարթեցնում էր ուրախութիւն։ Մէկ-մէկ անգամ այն հեռու գագաթներից, որոնք ոչ մի ժամանակ չէին թողնում իրանց սպիտակ զգեստը, խոնաւ օդ էր փչում։

Բէսսօն ընկաւ գեղեցիկ ճանապարհի վրայ, որը սկսուեց հետզհետէ լայնանալ։ Նրա երկու կողմը գտնվում էին գեղեցիկ արօտատեղիք։ Այծերն ուրախ-ուրախ թռչկոտում էին և ուտում հիւթալի խոտը։

Բայց արդէն մօտենում էր գիշերը։ Արեգակը մայրմըտաւ. ամեն կողմից երկար շուաքներ էր կազմվում։ Բէսսօն քաղցածութիւն զգաց և վճռեց հանգստանալ։ Նա նկատեց սրաձայն մի առուակ, որը արագ-արագ վազում էր քարերի մէջից։

Պանուկը նստեց այդ առուակի մօտ, խմեց սրա սառը և պարզ ջրից, լուացի իր երեսը, յետոյ յետ արեց իր տոպրակը, հանեց համեղ խմորեղէնը (գոնէ՞ նրա համար համեղ էր), մի կտոր պանիր, և սկսեց նախաճաշել մեծ ախորժակով, ստէպ-ստէպ խմելով առուակի ջրից։

Երբ որ սա նախաճաշեց և հանգստացաւ, աւելիևս ուրախացաւ. երկար նստեց այստեղ։ Մի առանձին զուարճութիւնով նայում էր նա իր ոտքերի վրայ, որովհետև հագած ունէր նոր՝ հօրից նուիրած կալաբանները — փափուկ ոտնաման, որը կարած էր խաղախորդի կաշուից։

Երկար ժամանակ նա հրճվում էր իր գեղեցիկ կալաբաններով, բայց յետոյ դարձրեց նրանցից աչքերը հեռու - բարձր և սկսեց դիտել իրան պատող սարերի լայն պատկերը։

Գեղեցիկ էր նրա շուրջը. նա կարծում էր, որ լինքը

այժմ մօտ է երկնքին։ Ահա՛, ահա՛, այն կանաչ գագաթի յետևից, այնտեղ այս բոպէիս երևում է փայլուն, ինչպէս թանկագին ադամանդ, Էլբօրուսի սառուցեալ գագաթը։ Բայց չէ՞ որ յայտնի է, որ նա շատ բարձր է և կպչում է համարեա երկնքին։

— Ուրեմն և երկինքը մօտ է՞, մտածում էր Բէսսօն։ Ա՛յ, այնտեղ բարձրանալ լաւ է...— ի՞նչ կայ այնտեղ։

Ինչ կար այնտեղ՝ նա չգիտէր, բայց կարծում էր, որ այնտեղ շատ լաւ է, աւելի լաւ է քանթէ առլում... Ո՞վ է բնակվում այն արծաթեայ և ոսկեայ տնակներում, որոնց մէջ բոլոր գիշերը վառվում են փայլուն ճրագները։ Այնտեղ երևի դարաւոր տօն է...

Ահա՛, ահա՛ վառվում է առաջին տնակում։ Այնտեղ միշտ վաղ է վառվում ճրագը՝ հէնց որ մայր է մտնում արեգակը։

Եւ նա նայում էր շարունակ երկնքի մուք կապուտակին և նկատում էր, ինչպէս մէկը միւսի յետևից վառվում էին երկնային ճրագները։

Այո՛... այնտե՛ղ, այնտե՛ղ, կրկնում էր նա. այնտեղ այժմ խնճոյք կայ, այնտեղ երգեր են երգում։

Եւ ուշադրութիւնով ականջ էր դնում. նա արդէն սկսում էր կարծել, որ ինքը լսում է հեռուից մի գեղեցիկ երգ։

Բայց շուտ էր անցնում ժամանակը՝ մութն ընկնում էր։ Բոլորովին մթնացաւ Էլբօրուսի գագաթը։ Անխռով խաղաղութիւն էր տիրել սարերում։ Միայն մէկ-մէկ անգամ թեթև քամի էր վեր կենում և անցնում գնում ուրիշ տեղեր. միայն կամաց խոխոջում էր աղբիւրը. այծերը խաղաղ քնած էին։

Խորը քնեց և Բէսսօն իր մտքերով երկնային տնակների մասին և նա երազում տեսնում էր մի լաւ բան, կախարդական մէկ բան, որը և պատմել չի կարելի մարդկային խօսքերով։

Գ

արթեց Բէսսոն առաւօտը հէնց առաջին ճառագայթի հետ, որը երևում էր սարերի յետևից և տեսաւ, որ այծերը դնացել են հեռու, հեռու: Նա ուզեց մի ծուռը ճանապարհով գնալ նրանց մօտ: Երկար ժամանակ գնում էր նա և ոչ մի կերպ չէր կարողանում հասնել իր հօտին:

Նա սկսում էր նկատել, որ ընկել է մի բոլորովին անծանօթ տեղ: Լաւ էր ճանաչում նա իր սարերին, բայց այդտեղ իր կեանքում չէր եղած: Ամեն կողմից խոր քարանձաւներ, ահագին ժայռեր, որը կարծէք այս է պէտք է քանդուին և ջարդեն նրան: Իսկ սպիտակ, փայլուն Էլբրուսը քանի գնում՝ մօտենում էր...

Մինչև անգամ Բէսսոն զարմացաւ: —Ո՞ւր է նա եկել: Ի՞նչպէս տանել այժմ այծերը և գտնել տան ճանապարհը:

Նա կանգնեց, նայեց դէսուդէն և ականջ դրեց, բայց շուրջը բոլորը խաղաղ էր: Յետոյ լսուեց մի ինչ որ տարօրինակ ձայն, յետոյ շշնջիւն և սկսեց նրան երեւալ, որ այդ ապառաժները և ժայռերը շշնջում են միմեանց հետ...

Իսկ ինչ բան էր դա: Նա արդէն պարզապէս լսեց մի սուր աղմուկ, յետոյ հառաչանք, մարդկային ծանր հառաչանք... Դարձեալ մէկ անգամ և դարձեալ...

Այն հառաչանքը լսվում էր հարևան ժայռից: Բէսսոն բարի մանուկ էր: Նա մտածեց, երևի այդ որևէ մի մարդու ոտը սլքուել է, սարի գագաթից ընկել և այժմ հառաչում է: Այս մտքով նա շտապեց դէպի խոշոր ձայնը: Եւ կարծես միորևէ անասելի ոյժ քաշում էր նրան և ցոյց էր տալիս ճանապարհը:


Н. Карась

Ահա ժայռի մէջ մի խորը ճեղքուած։ Նրա մէջ մութն է ինչպէս գիշեր։ Նրանից են գալիս տանջող Հոգու այդ Հառաչանքները։

Բէսսոն, երկար չմտածելով, անվախ անցաւ այդ ճեղքուածը, անցաւ մի քանի քայլ այդ խաւարում և յետոյ նա իրան տեսաւ մի լայնատարած բարձր քարայրի մէջտեղը, որը լուսաւորուած էր վերևից։

Բէսսոն կանգ առաւ քարացածի պէս և չէր կարողանում ուշքի գալ ուրախութիւնից։ Քարայրի մէջտեղը, ուղիղ անցքի տակ, որից լոյս էր թափանցում նրա մէջ, մի ահագին քարի վրայ ամուր և հաստ շղթաներով կապած էր մի դեղեցիկ երիտասարդ։ Յուսահատութիւնն արտայայտվում էր նրա պարզ աչքերում, ոսկիանման գանգուր մազերն ընկած էին նրա ուժեղ ուսերի վրայ։ Նա հակամարդկային ոյժ էր գործ դնում, որպէսզի կտրի իր շղթաները, բայց շղթաները խուլ կերպով զրնգում էին և չէին հնազանդվում։

Բէսսոն կանգնած էր լուռ. նա զմայլած նայում էր այդ երիտասարդի վրայ, որի մարմինը տեղ-տեղ ծածկուած էր փրփրագոյն, կարուած ոսկեգոյն շորերի կտորներով. լսում էր նրա Հառաչանքները և լացը, որի խուլ ձայնը անցնում էր ամբողջ քարայրով։

Բայց ինչ է դա։ Բարձրից՝ անցքի մօտ, որը լուսաւորում էր քարայրը, լսուեցաւ մի տարօրինակ ձայն, կարծես ծանր թևերից լինէր.—մէկ բոպէ՝ և անցքում երևեցաւ մի ահագին բազէ։ Նա ծանր մտաւ քարայրը, իջաւ երիտասարդի կրծքի վրայ և սկսեց բրել իր ամուր կտուցով նրա փափուկ և քնքոյշ մարմինը։ Վազեց կարմիր արիւնը։ Զարհուրանքների անտանելի դոչիւնները տարածվում էին ամբողջ քարայրում։

Բէսսոն չկարողացաւ դիմանալ։ Իրան մոռանալով ընկաւ նա բազէի վրայ և սկսեց նրան բաժանել երիտասարդի վիրաւորուած կրծքից։ Բազէն թեքեց գլուխը, ապշած նայեց Բէսսոյի վրայ իր չար և խորամանկ աչքերով և յանկարծ վեր քաշելով իր թևերը, բարձրացաւ դէպի վեր և քարայրից դուրս թռաւ։

(Կըշարունակուի)

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարմիր անձրև։ 1885 թ. Հոկտեմբերի 15-ին Ալպեան հարաւային սարերի զառիվայրի վրայ համարեաթէ անդադար անձրեւում էր ամբողջ օրը. առաւօտեան 9 եւ 11 ժամերի միջոցին որոտումի ձայներ էր լսվում, հարեւան լեռների զառիվայրերից բարձրանում էր թանձր մէջ. իսկ 4 եւ 5 ժամերի միջոցին թափվում էր բոլորովին կարմիր անձրեւ։ Այդ միջոցին ամբողջ երկինքը քօղարկուած էր ամպերով, օդը կարմրագեղնագոյն էր։ Միւս օրը բոլոր չորացած փոսերը կարմրին էին տալիս։ Լրագիրների ասութիւնով այդ տեսակ կարմիր անձրեւ միեւնոյն ժամանակ եկել է նաեւ շատ տեղեր՝ միջին եւ վերին Իտալիայում. իսկ միքանի տեղերում էլ անձրեւը բոլորովին սպիտակագոյն է եղել։

Տպագրութեան ապագան։ Ամերիկական տպագրական մեքենաների գործարանատէր յայտնի Գօէն ենթադրում է, որ մօտիկ ապագայում կըսկսուի տպագրուել լուսահան մեքենայով. կըտպեն օրինակի համար լրագրի մի սիւնեակ եւ նրան կարտատպեն ելեքտրական լոյսի զօրութիւնով, մաքուր թղթի վրայ, միայն շուտշուտ թերթերն առաջ մղելով. այնպէս որ մի բոպէում կարելի կըլինի տպել մօտաւորապէս 100 թերթ։

Նոր տեսակ անձրևապահ։ Այժմ սկսել են նոր ձեւի անձրեւապահներ շինել, որոնք ոչթէ կլոր են, այլ երկարաւոն-կլոր— ձուաձեւ։ Այդ ձեւն այն յարմարութիւնն ունի, որ երկու հոգի իրար հետ միաժամանակ կարող են պահուել անձրեւից։ Բայց եթէ անձրեւապահը դարձնուի քամու հակառակ կողմը, այնժամանակ մէկն ամբողջապէս կըծածկուի։

Նոր գրիչ։ Նիւրենբերգում Կալիշը մի նոր գրիչ է հնարել, որին կպցրած է մի խէժային թանաքով լի խողովակ։ Գրելու ժամանակ՝ գրիչը թանաքով թրջելու համար հարկաւոր է միայն մի քիչ սղմել խողովակը։ Դրա համար վերեւից մի փոքրիկ գնդիկ կայ, որի օգնութիւնով կարելի է թանաքը դուրս թափել խողովակից մինչեւ վերջին կաթիլը։

Փայտէ գիրք։ Գոպպերստադում (Նորվէգիա) փայտէ եկեղեցի շինելու ժամանակ մի գիրք գտնուեց, որից երեւում էր, որ գիրքը գրուած էր 1300 տարի առաջ։ Այդ գիրքը կազմուած էր թեղջի փայտի բարակ տախտակներից, ծածկուած բարակ, մոմէ խաւով եւ գրուած բարակ շրջանակի մէջ, այնպէս որ իրար վրայ դարսուած տախտակների մոմեղէն երեսները չէին կպել իրար. երեսների վրայ շատ բարակ կերպով զանազան նկատողութիւններ են գրուած այդ գիրքում պատահած թէ անցքերի եւ թէ գիւղատնտեսութեան մասին։

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Անցեալ աշնանը, երբ որ ծիծեռնակները հաւաքուեցան չուելու դէպի հարաւ, Բանեսբուրգում Մեխէր անունով մի կազմարար իր տանը կեցող ծիծեռնակի թևերին իւղած թուղթ կպցրեց, որի վրայ գրած էր. «Ա՜խ, ծիծեռնակ, ծիծեռնակ, ո՞ւրտեղ կանցկացնես դու այս ձմեռ»: Գարնանը ծիծեռնակը վերադարձաւ իր նախկին բունը. նրա թևի վրայ թուղթ կար կապած այս գրութիւնով. «Ֆլորենցիա, Կաստիլարի տանը. ես բերել եմ ինձ հետ շատ բարև»:

Վ. Արղուեթան

ՔԱՋԱՍԻՐՏ ՕՐԻՈՐԴՆԵՐ

1879 թ. դեկտեմբերի 5-ին երկու մարդ ճանապարհ ընկան Սուրբ-Լաւրենտիոս գետի վրայով: Օրը շատ ցուրտ էր. հիւսիսարևելեան սաստիկ քամին փչում էր ուժգին: Նրանք իրանց սահնակը լաստի վրայ դնելով՝ հասան գետի մէջտեղը. մէկ էլ յանկարծ հողմախառն ալիքի մի սաստիկ հարուած վրայ հասնելով լաստին՝ տապալեց նրան: Թըշուառներն շտապեցին լաստի՝ ջրից դուրս գտնուած ծայրը բռնել և աշխատում էին լողալով հասնել գետեզերքին, բայց իզուր եղաւ նրանց ջանքը: Ցուրտն այնպէս սաստիկ էր, որ նրանց ոտներն ու ծնկները փետացան և

նրանք արդէն իրանց կորած էին համարում։ Միքիչ ժամանակ նրանք մնացին այդ սոսկալի դրութեան մէջ և յետոյ սկսեցին օգնութիւն կանչել. նրանց կոկորդները ցաւում էին սաստիկ աղաղակելուց։ Վերջապէս իրանց ոյժը հաւաքելով՝ կրկին օգնութիւն կանչեցին։ Այս անգամ նրանց ձայնը լսուեց պարոն Դարլինգի տանը, որ իր ընտանիքով գետի ափին էր բնակվում։ Այդ պարոնը մահճումը հիւանդ պառկած էր։ Միւս տղամարդիկ աշխատում էին դաշտում, որը բաւականին հեռու էր գետից, իսկ տանը միայն մնացել էին տիկին Դարլինգն ու նրա երկու աղջիկը՝ Մէգգին և Ջէսսին։ Լսելով կործանուողների սիրտ պատառող ձայնը, նրանք շտապով դուռը բացին, և տեսան գետի հոսանքի դէմ կռուող թշուառներին, այն գետի, որ թէ իր լայնութիւնով և թէ արագութիւնով գերազանցում է Եւրոպայի բոլոր գետերից։ Տիկին Դարլինգն ուզեց դաշտում աշխատողներին իմացում տալ վտանգի մասին, բայց նախքան նա իր մտադրութիւնը կիրագործէր, քաջ օրիորդներն՝ առանց մի բառ արտասանելու մի մակոյկ գցեցին ջուրն ու սկսեցին բոլոր ոյժով թիավարել, ուշադրութիւն չդարձնելով ալիքների և հողմի վրայ։ Յաղթելով ամեն դժուարութեան, նրանք հասան՝ համարեա նուաղած և ուժասպառ եղած թշուառներին։ Տաս րոպէից յետոյ ազատուածներն իրանց հանդերձներն էին չորացնում և իրանք էլ տաքանում քաջասիրտ օրիորդների հօր տան կրակարանի առաջ։

ԱՇԱԿԵՐՏՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԻՆ

Ուսուցիչ. Ի՞նչ փոփոխութեան են ենթարկվում մարմինները ջերմութիւնից և սառնութիւնից:

Աշակերտ. Մարմինները ջերմութիւնից լայնանում են, իսկ սառնութիւնից սեղմվում:

Ուս. Ասա՛ մի օրինակ:

Աշ. Օրինակ՝ ամառը ջերմութիւնից օրերը երկարում են, իսկ ձմեռը կարճանում:

Ա. Տէր-Եսայեան:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ա. Սարդարեան.

21) Մեծ քաղաք եմ Եւրոպայում,
Փռուած սիրուն լճի վերայ.
Վեր ա՛ռ մկրատ՝ սուր և փայլուն,
Կտրի՛ր գլխիցս երկու տառ
Եւ կըտեսնես որ չմեռայ,
Այլ ես դարձայ գետ անուանի,
Յայտնի ամբողջ Ռուսաստանի:
Իսկ՝ ով գիտէ,
Ջգրու բան է,
Բարկանաս և ինձ փորձես
Եւ իմ մարմնից մի տառ պոկես,
Որ ինչ է ինձ ողջ-ողջ սպանես,
Ջատ ի զուր է.
Քո խելքն ո՞ւր է:
Չէ՞ որ ես էլ այնժամանակ,
Քո ցանկութեանը Հակառակ,
Բոլորովին կրկենդանանամ
Ու ամենքիդ մայր կրդառնամ:

Ժողովրդական.

22) Թագաւոր մ'ունիմ հնոց,
Գլխին դրեց ոսկէ սղոց,
Ելաւ կանչեց ննջեցելոց.
Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։

ՕՂԱԿԱԽԱՂ

Այս երեք օղակները տեղաւորել միմեանց մէջ այսպէս՝

1) Որ օղակների թուանշանները փոխադարձաբար ընկնեն մէկը միւսի հանդէպ և իրանցից կազմեն սիւնեակներ։

2) Գտնել օղակների մի այնպիսի դրութիւն՝ վերաբերեալ մէկը միւսին, որ իւրաքանչիւր սիւնեակի թուանշաններից ստացած գումարներն այնպիսի թուանշաններ տան, որոնք նշանակեն հայերէն այբբենարանի մէջ տառերի բռնած տեղերը (ի տառ պիտի ընդունել 11, լ—12, խ—13 և այլն)։



Գումարների տեղ դնելով համապատասխանող տառերը, մենք կրստանանք արտաքին օղակի շուրջը գրած հայ արդի նշանաւոր գրողներից մէկի ազգանունը, որը բաղկացած է 16 տառից։

Այդ ո՞ւմ ազգանունն է և մեծ օղակը ո՞ր թուանշանի դիմացը պիտի ընկնեն միւս երկու օղակների թուանշանները, որոնք նշանակուած են a և b տառերով։

ՆԱԽՆԹԱՑ №-Ի ՄԷՋ ԵՂԱԾ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ. 17) Անագ, նորա, աբօր, դաբն, 19) ծառ, 20) վառարան, ԲԵՐՈՒԻ՝ Սարդարաբադ։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Дозволено цензурою. Тифлисъ, 2 Апрѣля 1886 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2